№ 165 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 5 1900 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 5 № 165

ՔՍԱՆՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուբլի. կէս տարվան 6 բուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի եւ տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐՍԵՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Սահմանակիցների մասին.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Նամակ Շուշուց. Նամակ Խմբագրութեան. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Խոշոր մերկացումներ։

ՍԱՀՄԱՆԱԿԻՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Յայտնի է, որ վերջին երկու տարիների ընթացքում Անդրկովկասում սկսվել է մի կանոնաւոր և խիստ մաքառում կենդանիների ժանտախտի դէմ։ Սակայն մեր սահմանակից երկիրներում, Պարսկաստանում և Թիւրքիայում, այդ գործը դեռ զանցառութեան է տրված, ուստի այստեղ այդ վարակիչ հիւանդութիւնը ոչ միայն չէ պակասում, այլ աւելի ու աւելի հաստատվում է։ Ականատեսները, օրինակ, պատմում են, որ Լենքօրանի գաւառին կպած պարսկական Գիլեան գաւառում ժանտախտից մեռած կենդանիների դիակները չեն թաղում, այլ թողնում են բաց օդում։ Այդ դիակները ծառայում են իբրև կերակուր շների և գազանների համար։ Կենդանիներից վերցրած կաշին գործ է դրվում տեղական պիտոյքների համար։ Այսպէս վարվելով ժողովուրդը ցանկանում է մասամբ վարձատրել իրան, օգտվելով կենդանու կաշվից և տալով կերակուր շներին։ Սակայն այդպիսով նա տարածում է սոսկալի հիւանդութիւնը և ստեղծում է երկրի մէջ նոր նոր բուներ, որտեղից բռնկվում է ժատախտը հետևեալ տարիները և նորից տանում հազարաւոր զոհեր։

Բաւական չէ, որ մի երկիր բարեկարգված լինի, որպէս զի նա ապահով կերպով առաջ տանէ իր տնտեսութիւնը։ Անհրաժեշտ է, որ և նրա դրացին, նրա հետ շփում և յարաբերութիւն ունեցող սահմանակից երկիրը բարեկարգված լինի մի որոշ աստիճան, որպէս զի իր վնասակար ազդեցութեամբ չը կործանէ այն ջանքերը, որոնք արվել են առաջինում։

Մեր առաջ կարող է հանդէս գալ վաղը մի աւելի վնասակար և սարսափելի հիւանդութիւն՝ մարդկային ժանտախտը, որ երևացել էր մի քանի ժամանակ առաջ Պարսկաստանում և Տրապիզոնի շրջակայքում։ Ի՞նչ կարող ենք մենք սպասել մեր հարևան երկիրներից։ Արդեօք կարո՞ղ կը լինեն նրանք խստագոյն հսկողութիւն նշանակել հիւանդութիւնը կըզսպեցնելու համար և ձեռնարկել առողջապահական անհրաժեշտ միջոցներ հիւանդութեան տարածմանը արգելքներ դնելու նպատակով։ Ոչ։ Մենք շատ առիթներ ունենք կասկածելու, որ մեր հարևանները ընդունակ լինեն կազմակերպել մաքառման աջող և նպատակայարմար միջոցներ։ Մնում է, որ այդպիսի լուրջ դէպքերում եւրօպական պետութիւններից որ և է մէկը, կամ միջազգային մի հեղինակաւոր մասնաժողով իր ձեռքն առնէր հիւանդութեան դէմ մաքառելու գործը, ունենալով իր տրամադրութեան տակ բաւականաչափ դրամական միջոցներ և մասնագէտների ոյժեր։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՄՈՒԼ

«Россія» լրագրի 483 №-ում տպված է պ. Զ. Բալուշեանի «Гроза и Страхъ» («Պատուհաս եւ սարսափ») վերնագրով գեղեցիկ յօդուածը ցեղական թշնամութիւններ սերմանող մարդատեացների դէմ, որոնք ինքնակոչ «հայրենիք փրկողներ» են հանդիսանում։

«Դիտելով այդ «փրկողների» գործունէութիւնը, ասում է յօդուածագիրը, ես յաճախ հարց եմ առաջարկել ինքս ինձ՝ ինչով են իսկապէս զեկավարվում այդ պարոնները իրանց չար գործերը կատարելիս—համոզմունքով եւ պետութեան (սխալ հասկացված ?) շահերով, թէ եսական նպատակներով—եւ միշտ եկել եմ այն եզրակացութեան, որ նրանց զեկավարողը լոկ եսական նպատակներ են։ Այդ պարոնները մեծ մասամբ սահմանափակ, լուրջ, խաղաղ աշխատանքի անընդունակ եւ փոքր խելքի տէր մարդիկ են, սակայն ենթակայ են մեծամտութեան (ինքն իրան մեծ մարդ կարծելու մանիայի) եւ ձգտում են խաղալ անպատճառ խոշոր դերեր։ Ո՞րտեղ կարող են նրանք բաւարարութիւն տալ իրանց լայն ախորժակներին, եթէ ոչ խառնակութեան, շփոթութեան ժամանակ, երբ եւ ո՞րտեղ կարող են նրանք աւելի լաւ ծածկել իրանց անձնական թերութիւնները»։

*

«Развѣдчикъ» հետաքրքիր տեղեկութիւններ է հաղորդում այն ցուցմունքների մասին, որ Մեծ Իշխան Կոնստանտին Կոստանտինովիչ արել է կադէտների կօրպուսների վերատեսուչներին, երբ այս գարնան Նորին Բարձրութիւնը այցելում էր գաւառական զինուորական դպրոցները։ Այդպէս,

Մեծ Իշխանը այն կարծիքն է յայտնել, որ կադէտների կօրպուսներում ընդունված դաստիարակչական ըէժիմը չափազանց ձեւական է եւ չէ համապատասխանում աշակերտների հասակին... Հսկողութիւնը միակերպ է թէ 10 տարեկան երեխաների, թէ 18—20 տարեկան պատանիների վերաբերմամբ։ Թէ սրանք, թէ նրանք գտնվում են դաստիարակչի անընդհատ եւ անմիջական հսկողութեան տակ եւ հաւասարապէս իրաւունք չունեն ոչինչ ձեռնարկելու առանց նրա թոյլտուութեան... Նորին Բարձրութիւնը չէ հերքում աշակերտների հասակին եւ բարոյական զարգացման համապատասխանող եւ խոհեմ հսկողութեան նշանակութիւնը, բայց համոզված է, որ անընդհատ հսկողութիւնը, կանոնադրված իբր կրթական ըէժիմի հիմնական սկզբունք եւ միակերպ ծանրացած թէ երեխաների եւ թէ գրեթէ չափահաս մարդկանց վրա,—աւելի վնաս է բերում, քան օգուտ դաստիարակութեան գործում։ Ինչ վերաբերում է զանազան արգելիչ կանոններին, Նորին Բարձրութիւնը այն կարծիքն էր յայտնում, որ այդպիսի կանոններ չափազանց շատ են... եւ որ կան նոյն իսկ այնպիսի կանոններ, որոնք խախտվում են շարունակ, չը նայելով նշանակված խիստ պատիժներին։ Գործերի այդ դրութիւնը չէ կարելի բնական համարել. դա ցոյց է տալիս, որ կամ դպրոցը անզօր է կատարել տալ իր պահանջները կամ թէ այն, որ անհիմն են այդ կանոնները։ Այդպէս շարունակ խախտվող արգելումների թւում առաջին տեղը Նորին Բարձրութիւնը տալիս է ծխելուն եւ տրամադիր է կարծել, որ եթէ աշակերտները իմանային, որ, օրինակ, եօթերորդ դասարանում կամ բարձրագոյն վաշտում նրանց թոյլ կը տան ծխել հէնց դպրոցում, այդ նրանց վրա այնպէս կազդեր, որ չէին ձգտի աւելի վաղ իւրացնել այդ սովորութիւնը։... Նոյնպիսի միշտ խախտվող սահմանափակումներին է պատկանում, Նորին Բարձրութեան կարծիքով, եւ այն կանոնը, որով արգելվում է բեխեր պահել մեծ աշակերտներին։ Պատանու հպարտանալը իր նորաբոյս բեխերով հասկանալի է, բնական եւ բացի այդ միանգամայն անմեղ... Ի՞նչ կարեւորութիւն կայ արգելել այդ՝ կադէտների կօրպուսներում»։

*

Պետերբուրգի գրեթէ բոլոր մեծ թերթերը իրանց վրդովմունքն են յայտնում այն տխուր երեւոյթի առիթով, որ Բլագովեշչենսկում ռուս ամբոխը կոտորել է բազմաթիւ անզէն, ողորմելի չինացիների։ Աւելորդ է ասել, որ այդ վրդովմունքը պատիւ է բերում ռուս ինտելիգէնցիային։

«Հէնց որ սուրը հանվում է պատեանից,—ասում է «С.-Петербургскія Вѣдомости» լրագիրը,—իսկոյն երեւան են գալիս բարոյական զարգացման նախնական աստիճանի վրա գտնվող մարդիկ։ Այդպէս էին միսիոնէրներին եւ իրանց քրիստոնեայ հայրենակիցներին ջարդող չինացիները. բայց այդպէս վարվեցին, յամօթ եւ ի ցաւ մեզ, եւ քրիստոնեայ, ռուս մարդիկ Բլագովեշչենսկում ու նրա շրջակայքում խաղաղ եւ անզէն չինացի աղգաբնակութեան հետ»։

ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒՑ

Օգոստոսի 27-ին

Գօրուց «Մշակի» № 156-ի մէջ զարմանք էր յայտնված, որ Շուշու նորընտիր հոգաբարձութիւնը թեմական դպրոցի տեսուչ է հրաւիրել Բենիկ վարդապետին։ Կասկած չը կայ, որ այդ զարմանքը աւելի սաստիկ կը լինի Երեւանում, ուր շատ լաւ են ճանաչում Ղարաբաղի մայրաքաղաքի ընտրեալին։ Բայց ինչ ձեզ դրսից զարմանալի է թւում, այստեղ, այս խակապէս դժբաղդ քաղաքում, բնական, հասարակ բան է։ Դուք գիտէք, որ անցեալ տարի Շուշում էր, որ երեւան եկան նշանակովի հոգաբարձուներ, մի իրողութիւն, որ մեր դպրոցական տարեգրութիւնների մէջ ամօթով պիտի յիշատակվի։ Դուք լսել էք, որ Շուշուց անցեալ տարի խնդիրք էր գնացել կառավարութեան՝ քաղաքային ինքնավարութիւնը ջնջելու մասին։ Վերջապէս գիտէք թէ ինչ խայտառակութիւններ տեղի ունեցան այս ամառ հոգաբարձական ընտրութիւնների ժամանակ։ Ապա ուրեմն ինչպէս պիտի զարմանաք, որ տեսուչ է ընտրվում մի մարդ, որին նոյն իսկ այժմեան էջմիածինը թոյլ չը տուեց մնալ Երեւանում մինչեւ ուսումնական տարվայ վերջը...

Թողնենք, սակայն, որ շուշեցիները փորձով հասկանան թէ ինչ գանձ են ձեռք բերել իրանց քայքայված դպրոցի համար եւ պատմենք թէ ինչպէս է սարքվել ներկայ տեսչական ընտրութիւնը։ Այդ պատմութիւնը հարկաւոր է, որպէս զի ընթերցողը սովորէ առհասարակ ոչ մի դէպքում չը զարմանալ Շուշու վրա։

Երեւի գիտէք, որ նորընտիր հոգաբարձութեան մէջ մտել են երեք հոգի անցեալ տարվայ «նշանակովիներից»։ Դրանցից մէկը մի մասնաւոր փաստաբան է, որ բաւական հրաչկվեց Թիֆլիսի եւ Ռուսաստանի լրագիրների մէջ իր մի սխրագործութեան պատճառով. մի առանձին ֆանատիկոսական ատելութեամբ է վերաբերվել դէպի իր այն կարգակիցները, որոնք աւելի գիտուն եւ զարգացած լինելու դժբաղդութիւնն են ունեցել։ Յայտնի է, որ այս պատմական հանդամանքն էր կրկնվում Գաբրիէլ արքեպիսկոպոս Այվազեանի վերաբերմամբ, երբ նա Թիֆլիսի թեմի առաջնորդ էր։ Էջմիածինը հալածանքներ չը խնայեց նրա դէմ եւ ամեն կերպ աշխատում էր ստորացնել նրան։ Մի անգամ Այվազեանը խնդրում է սինոդից արձակուրդ, որ մի քանի ամսով Թէոդոսիա գնայ. նա տառապում էր գլխացաւից եւ յոյս ունէր, որ ծովային լողարանները կօգնեն իրան։ Սինոդը մերժում է այդ խնդիրքը, բայց այդքանով բաւականանալու բարձրութեան վրա կանգնել չէ կարողանում, այլ ստորանում է եւ իր ստորադրեալին խիստ կծելու համար պաշտօնական թղթի մէջ խորհուրդ է տալիս նրան «երթալ Փօթի եւ լուանալ զգլուխըն որչափ կամիցի»։ Տղայական վարմունք, որով, ի հարկէ, Գաբրիէլ արքեպիսկոպոսը չէր ստորանում. Էջմիածինը իր այդ չքնաղ սրախօսութիւնը հրատարակում է «Արարատ» ամսագրի մէջ, որպէս զի վիրաւորանքը աւելի ազդու լինի, հրապարակով։ Երբ մի կենտրոնական իշխանութիւն այսքան ողորմելի դրութեան է ենթանում, կարո՞ղ է առաջանալ որ եւ է հասարակաշահ, օգտաւէտ գործ։—Ի հարկէ ոչ եւ հարիւր անգամ ոչ։ Բայց հայկական կըրքերը միայն այսպիսի բաներ անել չը գիտէին։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԽՈՇՈՐ ՄԵՐԿԱՑՈՒՄՆԵՐ

«Քահանայական խնդիր» Արիստակէս եպիսկոպոս Սեդրակեանի. Մոսկվա, 1900, 220 երես, գինը 1 բուբլի։

III

«Քահանայական խնդիր» աշխատութիւնը մի ամբողջացրած պատմութիւն չէ. Արիստակէս եպիսկոպոսը տալիս է մեզ միայն իրան յայտնի փաստերը, իր անձնական դիտողութիւնները։ Բայց այս հանգամանքը ամենեւին չէ նուազեցնում այդ աշխատութեան նշանակութիւնը մեր ժամանակակից պատմութեան համար։ Հեղինակը սկսում է 1867 թւականից, երբ ինքը վարում էր Ղարաբաղի առաջնորդական փոխանորդի պաշտօն եւ հասցնում է իր դիտողութիւններն ու փաստերը մինչեւ Աստրախանի թեմի առաջնորդ նշանակվելը, աչքից չը հեռացնելով նաեւ դրանից յետոյ երեւան եկած իրողութիւնները։ Երեք կաթողիկոսների ժամանակն է պատկերանում այդ երկար շրջանի մէջ եւ մենք տեսնում ենք թէ իւրաքանչիւրը ինչպէս էր վերաբերվում քահանայական հարցին։

Դեռ 1867 թւից ուշադրութիւն դարձնելով տգէտ քահանաների առաջացրած չարիքների վրա, Սեդրակեան պիտի համոզվէր շատ փաստերով, որ այդ հարցը այնքան էլ հաճելի չէ իշխանութիւն ունեցողների, այսինքն թեմական առաջնորդների եւ նոյն իսկ էջմիածնի սինոդի համար։ Այսպէս, նրան չաջողվեց Տաթեւի վանքում բաց անել մի դպրոց՝ քահանայացուներ պատրաստելու համար։ Անշուշտ, սրբազանները դժգոհ էին, որ մի երիտասարդ, հասարակ վարդապետ ձգտում է բարեկարգել քահանայական դասը եւ դրա համար այնպիսի միջոցներ է ցոյց տալիս, որոնք ամենից առաջ վնասում էին նոյն սրբազանների գրպանին։ Այդ պատճառով էլ նրանք չտապում էին ստեղծել այնպիսի դրութիւն, որ հարկադրում էր Սեդրակեանին հրաժարվել պաշտօնից։

Բայց ահա 1883-ին Սեդրակեան եպիսկոպոսը նշանակվում է Թիֆլիսի թեմի առաջնորդ։ Հարկաւոր էին հսկայական ջանքեր՝ այդ թեմի քահանայական դասը փոքր ի շատէ բարեկարգելու համար։ Դրութիւնը ողբալի էր. գաւառներում անգրագէտ քահանաներ, իսկ Թիֆլիսում քահանայութիւն էին անում գիւղերի համար ձեռնադրվածները։ Կաթողիկոսանում է Մակարը եւ սկսվում են փաշայական կամայականութիւնները։ Արիստակէս եպիսկոպոսը ամբողջութեամբ դրել է իր ներկայ աշխատութեան մէջ իր մի ընդարձակ եւ մանրամասն յայտարարութիւնը (59 երես), որ ուղարկված է Էջմիածնի սինոդին 1889 թւի յունիս ամսին։ Այդ վերին աստիճանի հետաքրքրական դօկումենտը հայոց եկեղեցու մի կատաբեալ մարտիրոսագրութիւնն է ներկայացնում։ Այդքան անսահման կամայականութիւններից, այդքան հրէշաւոր կրքերից ազատվողը, ի հարկէ, միմիայն հայ եկեղեցին կարող էր լինել։ Միայն հայերի մէջ կարելի է գտնել այդ տեսակ փաշայական վերաբերմունք բարձր իշխանութեան ներկայացուցչի կողմից դէպի իր ստորադրեալը։ Էջմիածնի կաթողիկոսը իր սինոդով մի կռիւ էր յայտարարել Թիֆլիսի առաջնորդին, գլխաւորապէս այն պատճառով, որ վերջինս ամեն ջանք գործ էր դնում իր թեմի քահանայական դասը փոքր ի շատէ բարեկարգ դրութեան հասցնելու համար։ Մի մանր, անհիմն, երեխայական կռիւ էր դա, որի նպատակն էր ստորացնել առաջնորդին ամեն կողմից, զրկել նրան հեղինակութիւնից, ստեղծել նրա համար փշերի վրա նստածի դրութիւն, մի խօսքով զզուեցնել եւ փախցնել պաշտօնից։

Դուք ուշադրութեամբ հետեւում էք այդ կռւի ընթացքին, նկատի էք առնում երկու կողմերի ասածները եւ հանում էք այն եզրակացութեան, որ բացի անձնական կրքերից ու կամայականութիւններից չը կայ մի այլ հիմք, որ արդարացնէր Էջմիածնի վերաբերմունքը դէպի Թիֆլիսի առաջնորդը։ Լրագրական մի յօդուածի մէջ անկարելի է յիշատակել գոնէ մի փոքրիկ մաս այն բազմաթիւ փաստերից, որոնցով լի է այդ դօկումենտը։ Բայց մի կամ երկու հատ առաջ բերելը մենք պարտաւորութիւն ենք համարում։

Հայոց տգէտ հոգեւորականութիւնը միշտ մի առանձին ֆանատիկոսական ատելութեամբ է վերաբերվել դէպի իր այն կարգակիցները, որոնք աւելի գիտուն եւ զարգացած լինելու դժբաղդութիւնն են ունեցել։ Յայտնի է, որ այս պատմական հանդամանքն էր կրկնվում Գաբրիէլ արքեպիսկոպոս Այվազեանի վերաբերմամբ, երբ նա Թիֆլիսի թեմի առաջնորդ էր։ Էջմիածինը հալածանքներ չը խնայեց նրա դէմ եւ ամեն կերպ աշխատում էր ստորացնել նրան։ Մի անգամ Այվազեանը խնդրում է սինոդից արձակուրդ, որ մի քանի ամսով Թէոդոսիա գնայ. նա տառապում էր գլխացաւից եւ յոյս ունէր, որ ծովային լողարանները կօգնեն իրան։ Սինոդը մերժում է այդ խնդիրքը, բայց այդքանով բաւականանալու բարձրութեան վրա կանգնել չէ կարողանում, այլ ստորանում է եւ իր ստորադրեալին խիստ կծելու համար պաշտօնական թղթի մէջ խորհուրդ է տալիս նրան «երթալ Փօթի եւ լուանալ զգլուխըն որչափ կամիցի»։ Տղայական վարմունք, որով, ի հարկէ, Գաբրիէլ արքեպիսկոպոսը չէր ստորանում. Էջմիածինը իր այդ չքնաղ սրախօսութիւնը հրատարակում է «Արարատ» ամսագրի մէջ, որպէս զի վիրաւորանքը աւելի ազդու լինի, հրապարակով։ Երբ մի կենտրոնական իշխանութիւն այսքան ողորմելի դրութեան է ենթանում, կարո՞ղ է առաջանալ որ եւ է հասարակաշահ, օգտաւէտ գործ։—Ի հարկէ ոչ եւ հարիւր անգամ ոչ։ Բայց հայկական կըրքերը միայն այսպիսի բաներ անել չը գիտէին։

անցեալներում նա դատարանում պաշտպանում էր կաշառակերութեան մէջ մեղադրվող մի չինովնիկի եւ երբ ուրիշ ճար չէր մնում, նա սկսեց հաւատացնել դատաւորներին թէ ինքը անձամբ ճանաչում է մեղադրվողին եւ գիտէ, որ նա մաքրափայլ գառնուկ է։ Դատարանը չընդունեց այդ աւելի քան տարօրինակ փաստաբանութիւնը, իսկ բոլոր ֆելիետոնիստները, սկսած «Новости»-ի Բուկվայից, լիաբերան հեգնութեամբ վկայեցին, որ Շուշու փաստաբանը աննման է։ Այդ աննման փաստաբանը աննման հոգաբարձու էլ հանդիսացաւ։ Նրա աջ ձեռքը մի մարդ է, որի ամբողջ հոչակը այն է, որ նա հարուստ եղբայրների եղբայր է, իսկ ձախ ձեռքը մի հին չինովնիկ է, պաշտօնից, ի հարկէ, հրաժարված, որ դեկօրացիայի դեր է կատարում։

Ընտրութիւններից յետոյ Շուշի է գալիս Էջմիածնի ճեմարանի տեսուչ եւ «նոր կուրսի» ամենատիպիքական ներկայացուցիչ Կարապետ վարդապետը։ Նա այցելում է փաստաբան հոգաբարձուին իր յարգանքները մատուցանելու համար, երեւի այն պատճառով, որ պ. փաստաբանը, «նշանակովի» հոգաբարձուի պաշտօն ընդունելով անցեալ տարի, իրականացրել էր աստուածաշնչան հայր սուրբի իդէալներից ամենախոշորը։ Խօսք է լինում տեսչացուի մասին եւ ճեմարանի վարիչը առաջարկում է իր ընկերներին, ամենից շատ յանձնարարելով Բենիկին։ Այնուհետեւ կազմվում է հոգաբարձական ժողով, որին հրաւիրվում է եւ Կարապետ վարդապետը։ Այդպէս արվել է այն պատճառով, որ պատուելի հոգաբարձուները ծանօթանան «հեղինակաւոր» մարդու կարծիքների հետ տեսչացուի մասին եւ ինչ խօսք, որ նրանք այն կարծիքն են կազմում, թէ միակ փրկութիւնը Բենիկն է։ Փոխանակվում են վերին աստիճանի սրտառուչ հեռագիրներ հոգաբարձուների եւ վարդապետի մէջ, հեռագիրներ, որոնց մէջ «սուրբ գործ» բառերը գրկախառնվում են «շատ ուրախ ենք» բառերի հետ։ Այս քնքշութիւնները մոռացնել են տալիս բժիշկ Տատեանին, որին պաշտօնապէս հրաւէր էր ուղարկված հեռագրով եւ որը հաճայնութիւն էր յայտնել, խնդրելով հաղորդել պայմանները։ Ոչ պայմաններ են հաղորդում, ոչ նոյն իսկ արժանացնում են պատասխանի, մի բան, որ շատ սաղ է գալիս զարաբաղցիների հոչակված քաղաքավարութեան...

Այժմ երկու խօսք հոգաբարձութեան միւս երեք անդամների մասին։ Դրանք վաճառականներ են, «նշանակովի» չեն եղել, ընտրված են ժողովրդից, բայց ցոյց տուին, որ եթէ ունեն ընդունակութիւն, դա փաստաբան հոգաբարձուին եւ հարուստ եղբայրների եղբօրը ենթարկվելն է։ Սկզբում նրանք փորձեցին դիմադրել, բայց մի հարսանիքում, կանաչ սեղանի ետեւում, կատարեալ համաձայնութիւն կայացաւ։ Բենիկ վարդապետը հասնում է Շուշի, եւ հոգաբարձութեան կողմից իսկոյն հեռագիր է թռչում Էջմիածին, թէ վարդապետը տեսուչ է ընտրված միաձայն. նոր ընտրված հոգաբարձուներից մէկը հեռագրում է թէ սուտ է այդ «միաձայն» բառը, որովհետեւ ինքը չէ մասնակցել։ Պէտք է արդար լինել. Էջմիածնից հեռագրով հրաման է գալիս, որ տեսչի ընտրութիւնը յետաձգվի մինչեւ նոր առաջնորդի գալը։ Փաստաբանը հարուստ եղբայրների եղբօր եւ դեկօրացիայի պաշտօն կատարող հին չինովնիկի հետ շտապում է մի դժգոհ հոգաբարձուին էլ «կակղեցնել». նորից հեռագիրներ են թռչում Էջմիածին, որոնցով հոգաբարձութիւնը ստիպողաբար խնդրում է հաստատել իր ընտրեալին, եւ Էջմիածինը, վերջապէս, կատարում է այդ խնդիրքը։

Ահա եղելութիւնը։ «Մշակի» Գօրու թղթակցին թող յայտնի լինի, որ բժիշկ Տատեան չէր կարող Շուշի գալ, քանի որ նա չէ ունեցել այստեղ մօտիքներ, քանի որ ոչ ոք նրա կողմից չէ շողոքորթել Շուշու հոգաբարձուներին եւ մանաւանդ նրանց ամենախոշոր ներկայացուցիչ փաստաբանին եւ հարուստ եղբայրների եղբօրը։ Այստեղ, մեզանում, առանց այդ «առաքինութիւնների» կարելի է խեղդվել, ոչնչանալ. այստեղ այնպիսի խաւար եւ յետադիմութիւն է տիրում, որ երկու երեք մարդիկ կարող են խաղացնել հասարակութիւնը ինչպէս իրանց քէֆն է։ Զը գիտեմ, այս բոլորից յետոյ բժիշկ Տատեան կափսոսայ, որ իրան չաջողվեց ստանձնել դպրոցի կառավարութիւնը։ Իւրաքանչիւր թարմ գործիչ այստեղ կարող է միայն յուսահատվել, թաղել իր իդէալները։

**

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Բագու, օգոստոսի 30-ին

Ի պատասխան «Մշակի» № 154-ում Շուշուց գրված մի Նամակի, որով պ. Ղ. Խաչատրեանը մեզնից բացատրութիւն է պահանջում, ասելով, թէ մենք, որոնց նա չէ ճանաչում, էսօէնտուկում ներկայացրել ենք իր հեղինակած «Քիթը հուպ տալ» վոդեվիլը, որի ներկայացման իրաւունքը վերապահված է եւ այլն.—յայտնում ենք.

Ցիշեալ վոդեվիլի ներկայացման իրաւունքը անցեալ տարի մենք ստացել ենք իրանից, պ. հեղինակից, որի համար ունենք գրաւոր պայման։ Բացի այդ, Ղ. Խաչատրեանը իր ձեռքով է արտագրել պատճէնը եւ տուել մեզ։ Ինչպէս, է որ պ. Խաչատրեան չէ ճանաչում մեզ։ Բանը նրանումն է, որ պ. Խաչատրեանը իր նամակով ուրիշ բացատրութիւն է ուզեցել պահանջել մեզնից, բայց աւելորդ է համարել չիտակ խօսել։

Պայմանագրի չորրորդ յօդուածի համաձայն առաջին ներկայացման արդիւնքի հաւասար կէսը հեղինակին պիտի հասնէր, իսկ երկրորդ եւ երրորդ ներկայացումներից քառորդ մասը։ Բայց նոյն պայմանագրի 9-րդ յօդուածի համաձայն, երբ ներկայացումը հիմնովին բարեգործական նպատակով լինէր, հեղինակը ոչինչ չը պիտի ստանար։ Այդ կողմից կարող ենք հանգստացնել մեզ չը ճանաչող պ. Խաչատրեանին, տալով առ այժմ հետեւեալ բացատրութիւն։ Մեր տուած ներկայացման արդիւնքը՝ 206 ռուբլի՝ ուղարկված է չքաւոր հայ ուսանողների օգտին—102 ր. Պետերբուրգ՝ պ. Իսահակ Ծատուրեանին եւ 102 ր. Գերմանիա՝ մեր ուսուցիչ պ. Ս. Հովիւեանին, որպէս զի նրանք բաժանեն ուսանողներին։

Միքայէլ Յովհաննէսեանը մեզ համար միայն տոմսակ է տարածել եւ նա ոչ մի բացատրութիւն չունի տալու։

օր. Մարգարիտ Լազարեան
օր. Վարդուհի Լազարեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Պրոֆեսոր Վ. Դոկուչաեվ կիրակի, սեպտեմբերի 4-ին, կարդաց իր առաջին դասախօսութիւնը հողի կազմութեան մասին։ Դասախօսութիւնը, որ տեւեց մի ժամ, հետաքրքրեց ունկնդիրներին։ Դասախօսը գիտէ ժողովրդականացնել գիտութիւնը եւ հասկանալի դարձնել բնական բարդ երեւոյթները։ Երկրորդ դասախօսութիւնը պէտք է տեղի ունենայ այսօր երեկոյեան կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան դահլիճում։ Այդ դասախօսութեան մէջ պէտք է պարզվի այն ազդեցութիւնը, որ ունեն երկրի կլիման եւ երկրի դիրքը հողի կազմութեան վրա։

—

Մեզ հաղորդում են, որ դոկտոր Բօրբախի նախաձեռնութեամբ Գերմանիայում հրատարակվելու է մօտ ժամանակներումս մի ամսագիր, որ բացառապէս նուիրված կը լինի Արեւելքին եւ այն բոլոր հարցերի քննադատութեանը, որոնք կապ ունեն Արեւելքի գործերի հետ։ Դոկտոր Բօրբախ այժմ գտնվում է Թիֆլիսում։

—

Մեզ հաղորդում են, որ գերմանացի հայասէր գրականագէտների շրջանում մտադրութիւն կայ հրատարակել մի ժողովածու, «Братская помощь» ժողովածուի նման, եւ նրա արդիւնքը յատկացնել Թիւրքիայում բացված որբանոցների օգտին։

—

Վերջին օրերս եղանակը զգալի կերպով ցրտեց։ Կարսի նահանգում, ինչպէս մեզ տեղեկացնում են, սեպտեմբերի 1-ին եւ 2-ին եկաւ ձիւն, որ տափարակում հալվեց, իսկ լեռների եւ լեռնալանջերի վրա նստեց 1—4 վերշոկ հաստութեամբ։ Ալէքսանդրօպոլի գաւառում եկան անձրեւներ, որոնցից յետոյ ջերմութեան աստիճանը սաստիկ պակասեց, իջնելով ցերեկը մինչեւ 8—4° Ռեօմիւրի։ Ցուրտ է եւ Թիֆլիսի շրջակայքում։

—

Մեզ հաղորդում են, որ Թիֆլիսի նահանգական վարչութիւնը ներկայումս զբաղված է Ախալքալաքի գաւառի գիւղացիների օգնութեան հարցով։ Վարչութիւնը մտադիր է հայթայթել ազգաբնակութեանը աշնանայան սերմ, յուսալով, որ այդ սերմից բուսած հացահատիկը հաւասարաբար աւելի ապահով կը լինի եւ կարող կը լինի դիմանալ միջատների արշաւանքին։

—

Երէկ, երկուշաբթի, սեպտեմբերի 4-ին, կայացաւ Թիֆլիսի քաղաքային դումայի առաջին նիստը, իշխան Ա. Արգուտինսկու նախագահութեամբ։

—

Սենատը բացատրել է, որ քաղաքային բնակիչների համար հրատարակվող պարտաւորական կանոններով չէ կարելի սահմանել ոչ մի տուրք կամ հատոյթ յօգուտ քաղաքային դանձարանների։

—

«Новое Обозрѣніе» լրագրին հեռագրում են Պետերբուրգից. «Հրատարակված են կանոններ, որոնցով փոփոխութեան է ենթարկվում Թիֆլիսի ազնուականների կալուածական բանկի կանոնադրութիւնը»։

—

«Восходъ» լրագիրը հաղորդում է, թէ հարց է բարձրացրած մշակելու համար այնպիսի կանոններ, որոնցով որոշվեր հրէաների եւ օտարերկրացիների ժամանակցութիւնը ակցիոներական ընկերութիւնների գործերը կառավարելու մէջ։

—

Աչոտ քահանայ Տէր-Իսրայէլեան, ԶԱՔԱԹԱԼԱՑԻՑ, խնդրում է մեզ տպել հետեւեալը. «Մշակի» 151 համարում Զաքաթալայից մի սխալ լուր էր հաղորդված, իբր թէ ես հանգուցեալ Գրիգոր Զանչանի յիշատակին հոգեհանդիստ չեմ կատարել, մինչդեռ ես կատարել եմ հոգեհանդիստ յուլիսի 23-ին, ամենայն հայոց Վեհափառ Կաթողիկոսի կարգադրութեամբ»։

—

ՕԼԹԻՒՑ մեզ գրում են. «Գարնան սկզբից պարբերաբար տեղացող յորդ անձրեւների չնորհիւ սար ու ձոր կանաչեց, դաշտ ու տափարակ հացաբոյսերով ծածկվեց։ Անսահման ուրախ էր ժողովուրդը, որի ասելով, «Աստուած երթիկէն ցած կը թափէր», այնպէս որ կօտից սօմար էր սպասվում, որ չը տեսնված բերք կը լինէր օլթեցիների համար։ Եկաւ ամառը պարզ եղանակներով։ Հասաւ եւ հունձի ժամանակը եւ գիւղացին սկսեց առաս բերքը հնձել եւ չաղ խուրձերից ահագին դէզեր կազմել. բայց հէնց մեր գիւղացիների համար է ասված, թէ «ոչ ոքի ճրագը չի վառվի մինչեւ ի լոյս»։ Մօտ 40 օր եւ գիշեր տեղացող յորդ անձրեւները առաջացրին չը տեսնված հեղեղներ եւ զոհ տարան շատ ցորենի դէզեր, իսկ արտերում մնացած դէզերի վերեւի եւ ներքին մասերը փտեցին, եւ լիք ու կուշտ հասկերը սկսեցին նորից բուսնել ու ծիլեր արձակել։ Եթէ այդպէս մի քիչ էլ տեւէր, գիւղացիների յոյսերը բոլորովին «ջուր կը դառնային». բայց օգոստոսի երկրորդ կէսին եղանակը սկսեց լաւանալ։ Բերքի ¼ մասը միայն փչացաւ եւ սպասված թանգութիւնը տեղի չունեցաւ։ Ցորենի կօտը այժմ ծախվում է 90 կ.—1 ր. 20 կ., մինչդեռ մինչեւ նոր հունձը ծախվում էր 1 ր—60 կ.—2 ր.—10 կ., գարին 60 կ.—70 կ. է, որ ծախվում էր 1 ր., —1 ր.—40 կոպէկի. խոտի պուդը ծախվում է 20—30 կ., որ անցեալ տարի 60 կ.—80 կ. էր։ Սակայն եթէ տեղական իշխանութեան աչալուրջ հսկողութիւնը չը լինի, մի քանի գիւղական «փոդրադչիները» կարող են նախկին թանգութիւնը առաջ բերել, գնելով եղած ցորենը, գարին եւ խոտը։ Եթէ մինչեւ հացահատիկների հաւաքելը եղանակները չը փոխվեն, յոյս կայ, որ հացի գինն էլ կէժանանայ»։

—

ԻԳԴԻՐԻՑ մեզ գրում են. «Վերջերս երկու ներկայացում տուեց այստեղի թատերասէրների

Արիստակէս եպիսկոպոսը ընդդիմանում է մի տիրացուի ձեռնադրութեանը, ասելով թէ նա տգէտ է։ Սինօդը, պարտք համարելով հակառակվել նրան, հրաժայում է տիրացուին քահանայ ձեռնադրել Սանահնի վանքում, որովհետեւ, ասում է նա, տիրացուին սարկաւագութեան աստիճան տուել է հանգուցեալ Գաբրիէլ արքեպիսկոպոսը, որ «աւելի արժանաւոր, բաղահմուտ եւ գիտնական էր, քան Թիֆլիսի այժմեան թեմակալը»։ Տղայական վիրաւորանքի մի նոր օրինակ. բայց պէտք է կարծել, որ սինօդի անդամները չատ էլ ուրախ չը պիտի լինէին իրանց այս գիւտի վրա, երբ ստացան պատասխան Արիստակէս եպիսկոպոսից, որ ասում էր թէ Այվազեանը արժանաւոր եւ բարձր էր ժամանակակից բոլոր հայ հոգեւորականներից եւ ինքը միայն ուրախանալ կարող էր, որ սինօդը գոնէ Գաբրիէլ արքեպիսկոպոսի մահից յետոյ ընդունում է, որ նա արժանաւոր էր...

Թեմական առաջնորդի վարկն ու նշանակութիւնը գցելու համար էջմիածինը մոռանում էր ամեն ինչ, մինչեւ իսկ իրան։ Կարգադրութիւններ անել եւ ամենից առաջ ինքը ոտնակոխ անել իր կարգադրութիւնները—դա այնքան սովորական բան է մեր հոգեւոր վարչութեան համար, որ աւելորդ է այդ մասին խօսելը։ Ահա մի օրինակ։ Մակար կաթողիկոսը կոնդակով պատուիրում է առաջնորդին Վանքի մայր եկեղեցու վախճանված երկու քահանաների ծիսերը բաժանել միւս քահանաների մէջ։ Բայց դեռ այն ժամանակները Թիֆլիսի քահանաներից մէկը. Գիւտ Աղանեան, սովորութիւն ունէր բարեպաշտական ուխտագնացութիւններ կատարել դէպի էջմիածին։ Այդտեղ նա սարքում է, որ իրան Աւետաց եկեղեցուց փոխադրեն Վանքի մայր եկեղեցին. իզուր Թիֆլիսի առաջնորդը բողոքում է սինօդի այդ կարգադրութեան դէմ, իզուր նա յիշեցնում է կաթողիկոսական կոնդակը, իզուր աշխատում է հասկացնել, որ գոնէ քահանայական ծիսերի հարցը, մի եկեղեցուց միւս եկեղեցին փոխադրելու կարգադրութիւնը պէտք է թողնել թեմական առաջնորդին։ Ամեն մէկը, որ մերժում էր գտնում Թիֆլիսի առաջնորդարանում, իսկոյն դիմում էր էջմիածին եւ լիուլի բաւարարութիւն էր ստանում։ Սուրամի համար Արիստակէսը կամենում է երկրորդ քահանայ ձեռնադրել, բայց սինօդը մերժում է, որովհետեւ Սուրամի քահանան գրած է եղել թէ երկրորդ քահանայի հարկաւորութիւն չը կայ. իսկ երբ ժողովուրդը դիմում է խընդրագրով էջմիածին, այն ժամանակ հրաման է գալիս ձեռնադրելու նոյն մերժված տիրացուին։ Դիլիջանի համար քահանայացու է առաջարկվում մի ճեմարանաւարտ, բայց սինօդը մերժում է, առարկելով թէ քահանայացուն ճեմարանի խռովարար աշակերտներից մէկն է. մինչդեռ ճեմարանի վկայագրի մէջ ասված է թէ նա գերազանց վարքի տէր է եւ բացի դրանից քահանայացուն երեք տարի ուսուցչութիւն էր անում Դիլիջանի հայոց դպրոցում։ Մի եւ նոյն ժամանակ սինօդը առանց առաջնորդի գիտութեան ձեռնադրել է տալիս այն տգէտ տիրացուներին, որոնց չէր ընդունել թեմական հոգեւոր իշխանութիւնը։

Ե. այսպիսի փաստեր - օրքան կամենաք։ Արիստակէս եպիսկոպոսը դիմադրում էր որքան կարողանում էր. տգէտներին ձեռնադրելուց հրաժարվում էր, իսկ մի քանի արժանաւորներին, էջմիածնի կամայականութիւններին չենթարկելու համար, ձեռնադրում էր իր իշխանութեամբ։ Այս վերջին հանգամանքը առիթ տուեց Մակար կաթողիկոսին յանդիմանելու նրան իբրեւ ըմբոստի, որ յափշտակում է ամենայն հայոց կաթողիկոսի իրաւունքները։ Արիստակէս եպիսկոպոսը բացատրում է եւ փաստերով ապացուցանում, որ իր արածը ըմբոստութիւն չէ եւ իբրեւ օրինակ ցոյց է տալիս նոյն իսկ Մակար կաթողիկոսին, որ Թիֆլիսի թեմի առաջնորդ եղած ժամանակ ոչ միայն իր իշխանութեամբ, առանց սինօդին իմաց տալու, ձեռնադրում էր քահանաներ ամբողջ խմբերով, այլ եւ սինօդի բացարձակ հրամանները թողնում էր անկատար։ Այստեղ երեւում է մեր պահպանողականների քաղաքականութիւնը, որ հազարաւոր օրինակներով է երեւան եկել. ինչ որ իրանք են անում, լինի դա նոյն իսկ բացարձակ կամայականութիւն եւ ըմբոստութիւն, պախարակելի չէ, այլ նոյն իսկ գովելի. իսկ եթէ նրանց հակառակորդներն են փորձում անկախ գործել, հիմնվելով օրէնքների եւ իրաւունքների վրա, նրանք իսկոյն հռչակվում են ըմբոստ, անկարգ, քանդող եւ այլն։

Այս քաոսի, այս մանր մունր անձնական գծուծ հաշիւների, բծախնդրութիւնների, կրքերի մէջ, ի հարկէ, անկարելի պիտի լիներ պաշտօն շարունակել։ Եւ Արիստակէս եպիսկոպոսը հարկադրված էր մեծ բաւականութիւն պատճառել Մակարին, հրաժարվելով առաջնորդական պաշտօնից։ Այնուհետեւ նա երեւան է գալիս սինօդի անդամի պաշտօնով։ Ցայտնի է թէ էջմիածնի սինօդը Մակարի մահից յետոյ ինչ գործունէութիւն ցոյց տուեց։ Ցայտնի, է որ Երեւանի եպիսկոպոսի տեղակալութիւնը ահագին վէճեր յարուցեց, մեծամեծ դիմադրութիւններ առաջացրեց այն պատճառով, որ էջմիածնի վարչութիւնը մի շարք կարգադրութիւններով ցոյց տուեց թէ ինքը չէ կամենում հետեւել փաշայական կառավարութեան ձեւին. լոյս հանվեցան մի քանի խայտառակ իրողութիւններ. այսպէս էր, օրինակ, վեհարանի ծախսերի հաշիւը, ալան-թալանի այդ ապշեցնող պատմութիւնը։ Նոր կարգեր էին երեւան գալիս էջմիածնում եւ այդ կարգերից, բնականաբար, պիտի սարսափէին բոլոր սեւագլուխներն ու սեւահոգիները, որոնք սիրում են խաւար, անյայտութիւն, աւազակային արարքների լայն ասպարէզ։

(Կը շարունակվի)

խումբը։ Առաջին անգամ խաղացին «Բաղդասար աղբար» եւ «Բանի ամուսնութիւն», Ախալքալաքի երկրաչարժից ազատածների օգտին եւ արդիւնքը յանձնվեց գաւառապետին տեղ հասցնելու. իսկ օգոստոսի 26-ին խաղացին «Պէպո» եւ «Օրթաճալի քէֆը»։ «Պէպոն» գաւառական գիւղերում յաճախ խաղացվում է եւ ժողովրդի կողմից ընդունվում է մեծ սիրով։ Դահլիճը ծայրէ ի ծայր լի էր... որովհետեւ մուտքը ձրի էր։ Խաղն անցաւ բաւարար եւ ժողովուրդը հեռացաւ գոհ եւ ուրախ։ Շատ լաւ էր Կեկելի դերում օր. Վահանոյշ Մէլիք-Այվազեան, որը, մեր կարծիքով, ընդունակութիւններ է ցոյց տալիս ապագայում աջող դերասանուհի լինելու, ի հարկէ, եթէ աջողվի մտնել դերասանական խմբի մէջ եւ գտնէ լաւ ղեկավար։ Օրիորդը բեմ է դուրս եկել եւ Էմմայի («Ոճրագործի ընտանիք») եւ Տ. Նախարարեանի («Սխալ հաշիւ») դերերում, որոնց մէջ նոյնպէս մեծ աջողութիւն է ցոյց տուել»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—«Wiener Zeitung», հրատարակելով աւստրիական պարլամենտի արձակման պաշտօնական հրամանը, կցել է նրան նաեւ բացատրութիւններ այդ կարգադրութեան վերաբերմամբ։ Նայելով յօդուածի ոճին՝ այդ բացատրութիւնները վերագրում են աւստրիական մինիստր-նախագահ Կեօրբէրի գրչին։ «Երեք տարվայ ընթացքում—ասում է յօդուածագիրը—բոլոր բէֆօրմները կանգ են առել։ Ազգաբնակութեան բոլոր ցանկութիւնները պէտք է տեղի տային մի հարցի միայն—պաշտօնական լեզուի հարցին։ Պետութեան բոլոր ոյժերը ջլատված են մի պայքարից, որի պատճառով համաշխարհային արդիւնագործութեան եւ համաշխարհային առեւտրի բոլոր օգուտները, վերջին երեք տարիների ընթացքում, ապարդիւն անցան Աւստրիայի համար եւ բաժին ընկան ուրիշ ազգերի։ Կառավարութեան բարեմիտ ջանքերը, նրա քաղաքական անկուսակցականութիւնը եւ անաչառութիւնը ազգային հարցերի մէջ չը կարողացան հարկադրել պարլամենտին, որ նա անպտուղ օբստրուկցիայի փոխանակ զբաղվէր օգտաւէտ գործունէութեամբ։ Պարլամենտի արձակումը անհրաժեշտ դարձաւ։ Կառավարութիւնը հարկադրաբար խնդրում է ընտրողներին առաջիկայ նոր ընտրութիւնների ժամանակ ի նկատի ունենալ իրանց տնտեսական շահերը։ Արձակելով աշխատանքի անընդունակ պարլամենտը, կառավարութիւնը տուել է պահանջված պարտքը սահմանադրական սկզբունքին։ Ընտրողները պէտք է վճռեն, թէ կարելի է թոյլ տալ, որ մի պետութիւն զրկվի այն անգնահատելի բարիքներից, որոնք բղխում են սահմանադրական հիմնարկութիւնների անխափան եւ անընդհատ գործունէութիւնից»։

—Իտալական կառավարութիւնը, հիմնվելով գլխաւոր դատախազի զեկուցման վրա Անդրիի վիճակաւոր եպիսկոպոսի վարմունքի վերաբերութեամբ Ումբերտո թագաւորի թաղման ժամանակ, հրատարակեց մի հրաման, որով այդ եպիսկոպոսը զրկվում է իր բոլոր արդիւնքներից յօդուտ աղքատների։ Բոլորովին այլ ընդհարումն տեղի ունեցաւ Գրազելլի եպիսկոպոսի եւ Վատիկանի մէջ։ Ումբերտո թագաւորի յիշատակին կատարված մի հոգեհանգստի ժամանակ՝ Գրազելլի արտասանեց մի քարոզ, որի վերջում ցանկութիւն յայտնեց, որ խաղաղութիւնը եկեղեցու եւ պետութեան մէջ վերականգնվի. մի եւ նոյն ժամանակ նա մաղթեց, որ Աստուած ոյժ եւ կարողութիւն տայ Վիկտոր-Էմմանուէլ թագաւորին, որ նա կարողանայ իրագործել այդ խնդիրը։ Այդ քարոզից անմիջապէս յետոյ՝ եպիսկոպոսը հրաւիրվեց Վատիկան բացատրութիւններ տալու եւ պապից խիստ յանդիմանութիւն ստացաւ քարոզի մէջ յայտնած ցանկութեան համար։ Եպիսկոպոսը պատասխանեց, որ ինքը վարվել է բոլորովին կանոնաւոր կերպով, թէ որպէս եպիսկոպոս եւ թէ որպէս իտալական քաղաքացի։ Հաւատացնում են, թէ կառավարութիւնը իր հովանաւորութեան տակ կառնի Գրազելլի եպիսկոպոսին։

—Արտասահմանեան լրագիրները հաղորդում են, թէ արքայորդի Գէօրգի, Կրետէ կղզու գեներալ-նահանգապետը, կարճ ժամանակից յետոյ կուզեւորվի դէպի Եւրոպա եւ իր ճանապարհորդութեան ժամանակ կայցելէ Կրետէի հովանաւոր մեծ պետութիւնների արքունիքները, եւ անձամբ կը զեկուցանէ նրանց այն հետեւանքների մասին, որոնց հասել է իր կառավարութեան սկզբից մինչեւ այժմ։

—Հոսում, լուրերին նայելով, դաւադրութիւն է բացվել պապի կեանքի դէմ։

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

1 սեպտեմբերի

Կ. ՊՕԼԻՍ։ Մի քանի օր առաջ շատ յունահպատակներ ձերբակալված են այն պատրուակով, թէ ստորագրութեամբ դրած էին հաւաքում յօգուտ «Էտնիկա Հետերիա»-ի։ Ցունական գործերի լիազօրը այդ մասին բողոք յայտնեց արտաքին գործերի մինիստր Թէվֆիկ փաշային։

ՇԱՆԳՀԱՑ։ Սիչուան նահանգի արեւմտակողմում, Սուիֆուում, օտարերկրացիների գոյքը կողոպտված եւ այրված է։ Բոլոր օտարերկրացիներին առաջարկված է մնալ իշխանութիւնների հովանաւորութեան տակ։

ԲԵՐԼԻՆ։ Տակուից հաղորդում են, որ Պեկինի առումից անմիջապէս յետոյ՝ կայսերական զօրքերը հեռացան Պեկինից եւ նրա շրջականերից։ «Մեծ-բռունցքները» մնացին Տեանձինի շուրջը։ Նրանց ճնշելու համար 1000 եապօնական զինուորներ ուղարկելու խնդրի պատճառով, օգոստոսի 26-ին դաշնակից զօրքերից 3000 զինուորներ դուրս եկան Տեանձինից ընդդէմ «Մեծ-Բռունցքի»։

Ասում են, թէ կայսրը ժամանակաւորապէս բնակութիւն է հաստատել Պաօտինֆուում, բայց արքունիքը պատրաստ է փախչելու Շանսի, եթէ հանգամանքները թոյլ տան։

ԼՕՆԴՕՆ։ «Morning Post»-ին հաղորդում են Պեկինից, թէ ժանջուրական մինիստրները այցելեցին դեսպանատները չնորհակալութիւն յայտնելու քաղաքում եւ պալատում կարգը վերականգնելու համար։ Գերմանական դեսպանատանը նրանց չընդունեցին։

«Times»-ին հեռագրում են Շանգհայից, թէ ծովապետ Խուան եւ գեներալ Լի նշանակված են զօրքի եւ նաւատորմի հրամանատարներ Նանեանում։ Նրանք երկուսն էլ օտարերկրացիների հակառակորդներ են եւ քիչ ժամանակ առաջ հրաւիրվեցին փոխարքայի մօտ պաշտպանողական միջոցները քննադատելու համար։ Մեծ քանակութեամբ ռազմամթերք Ցզեանվանի զինարանից ուղարկված է Նանկին։

ԿԵՕԼՆ։ «Kölniche Zeitung» յայտնում է, թէ գերմանացիները Եանցէյի հովտում սեփական շահերի համար չեն աշխատում, այլ գործում են այնտեղ միւս բոլոր պետութիւնների հետ միացած. նրանք զօրք են ափ հանել այն պատճառով, որ բոլոր ազգութիւններին պատկանող օտարները երկիրի մէջ էին։ Գերմանական հպատակների շահերը պաշտպանելու անհրաժեշտութիւնը Եանցէյի միջին ընթացքում հարկադրեց կառավարութեանը երկու փոքրիկ նաւեր ուղարկել դէպի Խանկօու։

2 սեպտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Թագաւոր Կայսրը բարեհաճեց Բարձրագոյն հաստատել սրբազան Լէօնիդին Իմերեթիայի եպիսկոպոս, իսկ սրբազան Կիրիօնին—Գօրու։

ՄՕՍԿՎԱ։ Այսօր բացվեց Ռուսաստանում անաստվածաառութեան եւ մասային առաջին բօրսան. սկիզբն է դրված նոյնպէս ցուցակագրութեան ենթարկելու եղջիւրաւոր կենդանիների եւ մսեղէն արտադրութիւնների առուծախը։

ՕԴԵՍՍԱ։ Այսօր սկսվեցին դասախօսութիւնները նօվօրօսիական համալսարանի բժշկական ֆակուլտետում։

ՎԱՇԻՆԳՏՕՆ։ Իւնլու, Լի-Խունգ-Զանգի եւ Ցինի հետ միասին, լինելու է խաղաղութեան բանակցութիւններ վարելու գործակալ։

ՇԱՆԳՀԱՑ։ Լի-Խունգ-Զանգ այսօր ուղեւորվեց Պեկին։

ՎԻԵՆՆԱ։ Հրատարակված են կանոններ, որոնցով թոյլ է տրվում կանանց բժշկութիւն սովորել աւստրիական համալսարաններում եւ քննութիւն բռնել բժշկի եւ ֆարմացեվտի կոչումն ստանալու համար։

ԼՕՆԴՕՆ։ Բօբերտս հրատարակել է հետեւեալ յայտարարագիրը. «Կրիւգէր անցաւ պօրտուգալական սահմանը եւ պաշտօնապէս հրաժարվեց նախագահութիւնից։ Նրա հրաժարումը բօէրական գործից պէտք է ցոյց տայ բուրգերներին, որ անօգուտ է կռիւը շարունակել։ Նրանց, երեւի, անյայտ է, որ 15,000 հոգի իրանց հայրենակիցներից գտնվում են գերութեան մէջ եւ նրանցից ոչ մէկը ազատութիւն չի ստանայ, մինչեւ որ բոլոր զէնք կրողները անպայման անձնատուր չը լինեն։ Բուրգերները պէտք է ուշադրութեան առնեն, որ ոչ մի մեծ պետութեան կողմից չէ կարելի սպասել միջամտութեան։ Մեծ-Բրիտանիան վճռել է մինչեւ վերջը հասցնել պատերազմը, որը յայտնված էր հանրապետութիւնների նախկին կառավարութիւնների կողմից։ Եթէ հաշի չառնվեն մի քանի փոքրիկ շրջաններ, որոնք գրաւված են Բօտայի զօրքերով, պատերազմը դարձել է անխիղճ գործողութիւնների շարք։ Ես խախտած կը լինէի իմ պարտքս, եթէ գործ չը դնէի բոլոր միջոցները՝ պատերազմ վարելու այս ապօրինի եղանակին վերջ դնելու համար։ Միջոցները, որ ես ստիպված եմ գործ դնել, թոյլ են տրված պատերազմական սովորութիւններով։ Նրանք կորստաբեր են երկրի համար եւ ենթարկում են բուրգերներին անվերջ տանջանքների։ Որքան աւելի երկար տեւէ պարտիզանների պատերազմը, այնքան աւելի խիստ կը լինեն այդ միջոցները»։

ՊԵԿԻՆ։ «Մեծ-բռունցքից» 500 մարդ յարձակումն գործեցին ռուսական երկու բօտաների վրա, որոնք պաշտպանում էին երկաթուղու շինութեամբ պարապողներին Մացզիւֆուի հարաւակողմում։ Օգնական զօրքերի գալուց յետոյ՝ «Մեծ-բռունցքները» ցրվեցին։ Երկու ռուս վիրաւորված են։

ԼՕՐԷՆՑՕ-ՄԱՐԿԵԶԷ։ Լուր է պատում, թէ Բօտա հրաժարվել է բօէրական զօրքի հրամանատարութիւնից. նրան կը փոխարինէ Վիլսոն։

ԼՕՆԴՕՆ։ Բօբերտս հեռագրում է Մախադօդորպից. «Բուլլէր հաղորդում է, թէ գրաւել է Սպեցկօպ եւ գտել է այնտեղ շատ պաշարեղէն եւ ռազմամթերք»։

Ինժենէրների գնացքը, որ հուսարների 19-րդ գնդի պաշտպանութեամբ ուղարկված էր վերականգնելու հեռագրի գիծը Մախադօդորպի եւ Լէյդենբուրգի մէջ, ենթարկվեց յարձակման։ Բոլոր ինժենէրները վերադարձան մօտակայ բանակը, բայց պաշտպանող զօրքի մասին ոչ մի տեղեկութիւն չը կայ։

ԼՕՐԷՆՑՕ-ՄԱՐԿԵԶԷ։ Կրիւգէր Պօտտի տնից տեղափոխվեց Նահանգապետի տունը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Ֆուլեարդի կայարանի գրաւմամբ մանջուրական երկաթուղու կողմնակի գիծը նորից մեր ձեռքումն է։

Գեներալ Բենենկամպֆ իր հեծելազօրքի հետ միասին օգոստոսի 24-ին ուղեւորվեց Ցիցիկարից դէպի հարաւ։ Օգոստոսի 26-ին, նրան օգնելու համար, առաջ գնաց նաեւ գեներալ Օրլով եւ 27-ին անցաւ Ցեանգուանդիից մի տեղում, որ երկու ասպարէզով Ցիցիկարից հեռու է։ Ցիցիկարում թողնված է պահապան զօրք այն թնդանօթներով, որոնք խլված են չինացիներից։ Օգոստոսի 25-ին գեներալ Կրիժանովսկու հեծեալ զօրաբաժինը գրաւեց Օմսօ քաղաքը առանց կորուստների մեր կողմից։ Սէօլանցդիսօուի մօտ թշնամին թողեց չորս թնդանօթ։ Կրիժանովսկու ետեւից ուղարկված արեւելեան-սիբիրական 14-րորդ նախաձիգ գունդը հասաւ Օմսօ օգոստոսի 26-ին, ուր նոյն օգոստոսի 26-ին գնացին նաեւ Նինգուտիից մնացած օգնական զօրքերը։

ՊԵԿԻՆ։ Կետտելէրին սպանողի հարցափորձը այսօր շարունակվեց։ Ձերբակալվածին խօսեցրին երես առ երես Կօրդէյի հետ, որը ուղեկցում էր դեսպանին սպանութեան ժամանակ։ Մարդասպանը, համաձայն իր խոստովանութեան, ունտեր-օֆիցեր է. նա յայտնեց, թէ գործում էր բարձր պաշտօնական անձերի հրամանով։ Պատւիրված էր սպանել բոլոր օտարազգիներին, եւ նա չը գիտէր, թէ ում էր սպանում։

ՇԱՆԳՀԱՑ։ Լի-Խունգ-Զանգ, գերմանական դեսպան Մոմմին այցելելուց յետոյ, ուղեւորվեց այսօր առաւօտեան Տակու՝ անգլիական շոգենաւով, հեռագրական վարչութեան վերատեսուչ Շէնգի ուղեկցութեամբ։ Այստեղ ասում են, թէ կայսրուհին լիազօրութիւն է տուել խաղաղութեան բանակցութիւններ վարելու միայն Լի-Խունգ-Զանգին եւ Ցինին. Գարտի նշանակումը չէ հաստատվում։

Կայսրուհին, կայսրը եւ պրինց Տուան յիրաւի գնացել են Տայիւէնֆու։

ԳԼԱՍԳՕ։ Պաշտօնապէս ապացուցված է, որ տեղի է ունեցել էլի հիւանդութեան մի դէպք ժանտախտից, որ սակայն աւելի քիչ վտանգաւոր է, քան նախկին դէպքերը։ Այսպիսով ընդամենը տեղի են ունեցել հիւանդութեան 17 եւ մի կասկածելի դէպք. բժիշկների հսկողութեան տակ գտնվում են 115 մարդ։

ԿԱՊՇՏԱԴ։ Ֆրէնչ առաւ Բաբերտոն եւ գրաւեց երկաթուղու կայարանի բոլոր շարժական կազմը 43 շոգեկառքով։ Նրա ձեռքն ընկան Մաուզէրի հրացաններ, ռազմամթերք, կենդանիների հօտեր եւ երեք չաբաթվայ պաշարեղէն։ Գերի են առնված 100 բօէրներ։

ԼՕՐԷՆՑՕ-ՄԱՐԿԵԶԷ։ Կրիւգէրին անուանապէս գերութեան մէջ են պահում, որովհետեւ բրիտանական հիւպատոսը վճռականապէս բողոքեց այն հանգամանքի դէմ, որ Կրիւգէրը օգուտ քաղէ պօրտուգալական երկրից, որպէս ընակութեան տեղից՝ Տրանսվալի հետ յարաբերութիւններ ունենալու կամ այնտեղի գործերը ղեկավարելու համար։ Այս պատճառով Կրիւգէր հիւպատոս Պօտտի տանից տեղափոխված է նահանգապետի տունը, որտեղ նա գտնվում է խիստ հսկողութեան տակ։ Տան առաջ կանգնած են զինուորական պահապաններ։ Նահանգապետի քարտուղարը պատասխանատու է Կրիւգէրի համար. նրան հրամայված է դուրս չը թողնել տրանսվալեան նախագահին նահանգապետի տանից։ Նահանգապետը տեղեկացրեց Պօտտին, որ հրամայված է չը ճանաչել վերջինին Տրանսվալի եւ Օրանժեան հանրապետութեան ներկայացուցիչ, որոնք այժմ բրիտանական երկիրներ են։

Ֆրանսիական հիւպատոսը եւ հիւպատոսական կցորդը կամենում էին տեսնվել Կրիւգէրի հետ, բայց նրանց չը թողին նախագահի մօտ։ Կրիւգէրի ատրճանաւորներին նոյնպէս թոյլ չը տուին տեսնվել նրա հետ։ Շալկ-Բուրգէր, որ հասաւ այստեղ անցեալ գիշեր, նոյնպէս թոյլատրութիւն չը ստացաւ այցելելու Կրիւգէրին եւ անյապաղ յետ գնաց. նրա հետ միասին գնաց եւ Ալֆօն Էլօֆ։

Երէկ երեկոյեան այստեղ ձերբակալվեցին հինգ հոգի, որոնք մեղադրվում են մի դաւադրութեան մէջ, որի նպատակն էր օդը թռցնել Պօտտի տունը։ Ձերբակալվածներից երեքը այսօր արձակված են։ Բանտում պահված են երկու անգլիացիներ։

ԿԱՊՇԵՀՕՊ։ Պոլկերիւ վերցրեց Կապշեհօպ։ Շտէյն թնդանօթախմբի հետ միասին նահանջեց դէպի Գէօկտօսպրոյտ։

ՀՕՆԳԿՕՆԳ։ Գերմանական «Bussard» շրջանաւը լուր բերեց, թէ Կանտոնում ամբոխը քանի գնում այնքան աւելի յանդուգն է դառնում օտարազգիների վերաբերմամբ. իսկ ընդհանրապէս խաղաղութիւն է տիրում։ Վեց օտարերկրեայ զինուորական նաւեր կանգնած են Շամիէնի հանդէպ։ Բօկի մարտկոցներում գործունէութիւն ամենեւին չէ նկատվում, Հնդկական երրորդ բրիգադային հրամանագրված է անյապաղ ուղեւորվել դէպի Վէյխայ-վէյ։

ՀԱԱԳԱ։ Բօէրական պատգամաւորութիւնը իր հրատարակված յայտարարագրով յայտնում է, թէ Անգլիան խախտեց պատերազմական իրաւունքը եւ քաղաքակրթված ազգերի սովորութիւնները։ Անգլիական յայտարարագրերը միայն պատճառանքներ էին պատերազմը վարելու մարդատեաց եղանակը շարունակելու համար։ Վերջում յայտարարագրի մէջ ասված է. «Ցանուն մարդկային արդարութեան, մենք դիմում ենք բոլոր ազգերին եւ հրաւիրում ենք նրանց օգնել մեզ այս ճգնաժամի օրերում եւ ներկել մեր հայրենիքը։ Մենք յոյս ենք դնում Աստուծու վրա, որ մեր խնդիրը լսելի կը լինի։

3 սեպտեմբերի

ՎԻԵՆՆԱ։ Լրագիրները հաղորդում են, թէ երեքպետեան դաշնակցութեան զինուորական գործակալների տեղերը Պարիզում, որոնք փոխադարձ համաձայնութեամբ թափուր էին մնացել Դրէյֆուսի դատավարութեան պատճառով, նորից բռնված կը լինեն։

Պարիզից ստացված մասնաւոր տեղեկութիւններին նայելով՝ ֆրանսիական արշաւախումբը Սօմալի երկրում զինթափ է արված եւ գերի է առնված անգլիացիներից։

ԿԱՐԼՍԲԱԴ։ Պարսից Շահը ժամանեց Կարլսբադ։

ԼԷԴԻԲԱՆԿ։ Ազատամիտների միութեան մէջ Ակվիտ ճառ արտասանեց, որի մէջ ազատամիտ կուսակցութեան մեծամասնութեան կողմից յայտնեց, որ հարաւ-ափրիկեան հանրապետութիւնների միացումը անդառնալի է եւ թէ այդ հանրապետութիւնները պէտք է վերջնականապէս միացվեն Անգլիային։ Պատերազմը ցոյց տուեց այն վտանգը, որ կորուստ էր սպառնում հարաւային Ափրիկային։

ԼՕՐԵՆՑՕ-ՄԱՐԿԵԶԷ։ Այստեղ եկած բուրգերները հաղորդում են, թէ բօէրները Նելսպրոյտում կռուում են միմեանց հետ եւ կողոպտումներ ու հրդեհումներ են կատարում։ Նրանք ասում են, թէ նախագահ Կրիւգէր թողեց նրանց բաղդի կամքին, տարաւ իր հետ նրանց ոսկին եւ թողեց նրանց միայն թղթադրամներ։ Լուրերը բուրգերների անձնատուր լինելու մասին չեն դադարում։ Կրիւգէր գտնվում է դեռ եւս նահանգապետի տանը։ Տրանսվալեան ատրճանաւորներին չեն թողնում տեսնվել նրա հետ։ Պօտտ հիւպատոսը յայտնեց, թէ Բէյտց այնտեղ չէ։

4 սեպտեմբերի

ԿԻԵՎ։ Հարաւ-արեւմտեան երկրի չուկաներում նկատվում է ցորենի եւ հաճարի գնի բարձրանալը։

ՇԱՆԳՀԱՑ։ Կայսրուհի-խնամակալուհին օգոստոսի 26-ին ժամանեց Կինչժօու, Տայիւէնֆուի մօտ։—Տուանին եւ նրա համախոհներին

պատժելու հարցի վերաբերմամբ Լիխունգչանգ ցանկալի համարեց, որպէս զի դաշնակիցները կազմեն այն անձանց ցուցակը, որոնց մեղաւոր են համարում եւ հատապատասխան պահանջներ անեն։

ԼԻՍԱԲՕՆ։ Պորտուգալական կառավարութիւնը դիմեց մոզամբիկեան նահանգապետին հեռագրով, որով թոյլ է տալիս Կրիւգէրին ճանապարհ ընկնել Լօրենցօ-Մարկեզէից դէպի Եւրոպա, բայց նահանգապետը առաջ պէտք է հաւատիանայ, որ Կրիւգէր յիրաւի գնում է Եւրոպա։ Նահանգապետին հրամանագրված է ձեռք առնել բոլոր նախազգուշութիւնները, որպէս զի Կրիւգէր վայելէ ապահովութիւն եւ յարգանքով վերաբերմունք։

ՊԷԿԻՆ։ 1500 գերմանացիներ գաշտային մի բատարէայով, գեներալ Գէպֆնէրի հրամանատարութեամբ, ճանապարհ ընկան հարաւային ուղղութեամբ։ Արշաւախմբի նպատակի մասին ոչինչ յայտնի չէ, բայց ասում են, որ խօսքը Սիէնցիանի գրաւման մասին է երկաթուղու գծի վրա Բաոդինֆու�ում, ուր ուր հաւաքվել են շատ «մեծ-բռունցքականներ»։

Գեներալ Լենեվիչ տեղեկացրեց, որ հրաման ստացաւ դուրս գալ Պէկինից ռուսաց զօրքերի մի մասի հետ։

ՊՐԷՏՕՐԻԱ։ Նիդէրլանդեան ընկերութեան երկաթուղին պաշտօնապէս զինուորական իշխանութիւնների կարգադրութեան տակ է առնված։

ՊԷԿԻՆ։ Պէկինում ռուսաց զօրքերի աստիճանաբար պակասումը սկսվեց։ Օտարազգի բերդապահ զօրքի քանակութիւնը Պէկինում 70,000 է, նրանցից 22,000 եապօնացիներ են։ Եապօնական դեսպանը եապօնական 15,000 զօրքի հեռացնելու կողմնակից է, որոնց, սակայն, Եապօնիան որպէս պահեստի զօրք պէտք է պահէ Տունչժօուի եւ Ծղիան-Զօղեանի միջեւ. այնտեղ գտնվող անգլիական զօրքերը ենթարկվեցին զանազան յարձակումներին, այնպէս որ սպանված են շատ բռունցքականներ։

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Երկրորդ ներքին փոխառութեան վիճակախաղի 69-րդ տիրաժը։ Տիրաժ դուրս եկան հետեւեալ սերիաները.

18894, 6557, 3452, 10389, 1643, 17838, 8257, 13037, 9139, 5190, 16293, 19638, 15032, 12595, 1099, 18364, 19944, 16080, 505, 13075, 16200, 9612, 1741, 13949, 8630, 9284, 18165, 776, 3386, 2154, 7116, 13790, 3099, 9330, 17924, 9966, 14619, 10743, 11323, 18608, 19861, 10497, 3747, 16893, 4317, 13060, 12432, 4710, 9323, 11591, 4901, 10101, 66998, 4160, 12131, 3706, 2631, 2412, 694, 2006, 10080, 18831, 14775, 16307, 16427, 16256, 19084, 2758, 17445, 19779, 12515, 2939, 11386, 6034, 19696, 8266, 7157, 17430, 13581, 6069, 11057, 5237, 11845, 567, 3724, 5309, 10790, 4415, 18422, 9623, 11525, 17123, 12518, 8778, 14297, 10304, 5373, 1048, 1750, 10780, 7141, 17762, 18161, 2963, 18826, 14851, 13331, 16233, 10678, 5807, 17172, 12211, 8080, 7497, 4179, 11478, 18090, 14709, 3019, 13173, 14110, 9101, 1211, 12608, 15306, 15148, 15517, 17545, 3257, 11437, 19629, 14076, 11520, 10906, 6545, 7542, 8472, 1041, 1541, 4480, 7819, 2802, 12603, 12309, 18415, 15286, 8392, 5673, 8659, 17143, 15822, 14418, 19407, 12389, 13711, 2673, 3911, 14525, 3217, 3191, 2329, 16433, 14246, 19588, 3942, 14206, 8894, 15347, 6338, 13850, 13762, 13461, 10037, 7528, 18665, 5925, 1971, 14961, 5584, 14139, 8350, 695, 15487, 13334, 15006, 9654, 1736, 7835, 2602, 6976, 8879, 17979, 19414, 13947, 11884, 6370, 15759, 386, 15854, 3510, 2187, 17785, 3325, 6131, 8837, 1312, 18070, 16896, 13717, 13791, 2841, 18037, 5718, 15220, 11876, 10167, 13732, 12562, 840, 288, 6169, 1743, 2442 և 19915.

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ

Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ

ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ընդունվում են փոքրահասակ **ՈԱՀԼԵԲՈՒՔՆ**-ներ մի բարեկիրթ հայ ընտանիքում՝ ձեռնտու պայմաններով։ Տունը գտնվում է՝ աշակերտների համար շատ յարմարաւոր փողոցում։ «Коммерческое училище»-ին կից՝ Екатерининская ул., № 2, երրորդ դուռը։ (Ե. ո.) 1—3

ՄԻ ՈՒՍՈՒՑՉԻ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ

ընդունում են հասոյթաւոր գիշերօթիկ աշակերտներ (пансіонерами) կրկնութեամբ, առեւտրական եւ այլ միջնակարգ դպրոցների համար։ Հասցէն՝ Графская улица, № 10, домъ Элiозова. 1—6

Կար ու ձեւի ԴՊՐՈՑ

ՕՐ. ՆԱՏԱԼԻԱ ՇԱՀՈՒՄԵԱՆԻ

Աշակերտուհիների ընդունելութիւնը ամենայն օր է։ Պարապում են երկու նոր տեսակ մեթոդով։ Հասցէն. Թիֆլիս, Մողնու եկեղեցու հանդէպ. № 13. 4—6

Ընկերութիւն

ԲՐՕԿԱՐ ԵՒ ԸՆԿ.

ԾԱՂԿԱՅԻՆ

զանազան հոտեր ունեցող

Օ-ԴԷ-ԿՕԼՕՆԻ

հնարողներ.

Նոր հոտերով

«ՕՐԽԻԴԷՅԵԱ»

«ԼԵՒԿՕՑ»

«ԽՆՁՈՐԵՆՈՒ ԾԱՂԻԿ»

«ՄԻՄՕԶԱ»

Սրուակը 1 ր.
½ » — 60 կ.
¼ ֆ. 1 ր. 75 կ.

104,035 (ամս. 5) 2—10

ԹԷՀՐԱՆԻ ՏՂԱՅՈՑ ԵՒ ՕՐԻՈՐԴԱՑ

դպրոցների համար հարկաւոր են

ՈՒՍՈՒՑԻՉ ԵՒ ՎԱՐԺՈՒՀԻ

թուաբանութեան, հայերէն լեզուի եւ ուրիշ դասերի։ Ուսուցիչը կը ստանայ ճանապարհածախս, բնակարան եւ 600 րուբլի ռոճիկ. վարժուհին՝ ձեռագործի եւ մի քանի դասերի համար՝ ճանապարհածախս, 500 րուբլի ռոճիկ, առանց բնակարանի։ Դիմել Կարապետ Մասէհեանին, Թիֆլիս, «Գրանդօտել»։ № 8. 3—3

Բժիշկ Գ. Մեհրաբեան

վերադառնալով Թիֆլիս, վերանորոգեց բերանի խոռոչի եւ ատամների հիւանդութիւնների բժշկութիւնը։ Ընդունելութիւնը առաւօտեան 10—2 ժ. եւ երեկ. 5—7½ ժ. իր նոր բնակարանում, որ գտնվում է հին բնակարանին կից, Վելիամինեան փող. տ. Քարտաշեանի, № 4. [Вельяминовская ул. № 4, домъ Карташянъ]. 3—25

ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԻԶ

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ԵՒ ՊԱՆՍԻՕՆ

Ս. ՊԵՏՐՈՍԵԱՆԻ

ԲԱԳԻՈՒՄ

Ընդունվում են երեխաներ եւ պատրաստվում օրիորդաց եւ տղայոց գիմնազիայի, բէալական դպրոցի եւ այլ ուսումնարանների համար։

Մանկական պարտէզի նպատակն է կրթել երեխաներին (4—7 տարեկ.) ֆրէբելեան սիստեմով։ Ընդունվում են գիշերօթիկ եւ կիսագիշերօթիկ երեխաներ։ Մանկական պարտէզի եւ ուսումնարանի մանրամասն ծրագիրը կարելի է ստանալ օգոստոսի 20-ից, Բագումում։ 9—9

Նոր բացված

ԴՊՐՈՑ

ԿԱՐ ՈՒ ՁԵՒԻ

Մ. Մ. ԿԱՐԱ-ՄՈՒՐԶԱՅԻ

Աշակերտուհիների ընդունելութիւն սեպտեմբերի 1-ից ամեն առաւօտ ժամի 10—12։ Պարապմունքները կը սկսվեն սեպտեմբերի 11-ից։ Սօլոլակ, Լերմոնտովսկայա (նախկին Նագորնայա). № 27, տ. Շամխարեանի։ 2—5

1827 թւին հիմնված Առաջին Ռուսական Ապահովագրական Ընկերութեան Վարչութիւնը

սրանով յայտնում է, որ Սօլոլոն Աւետովիչ Կազարով այլ եւս այդ ընկերութեան գործակալ չէ։ Այժմ Թիֆլիսում հիմնված է Թիֆլիսի, Երեւանի, Ելիսաւետպոլի նահանգների եւ Կարսի շրջանի համար ԳԼԽԱՒՈՐ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ, յանձին Գրիգորի Աղամովիչ **ԿԱՐԱՆԳՕԶՕՎԻ**, որին լիազօրութիւն է տուած կատարելու.

1) Ապահովագրութիւն հրդեհից ամեն տեսակ գոյքերի եւ
2) Ապահովագրութիւն ամեն տեսակ դժբաղդ դէպքերից, այն է,

a) Խմբական ապահովագրութիւն դժբաղդ դէպքերից բանւորների եւ ծառայողների, գործարաններում, գործատներում եւ զանազան արդիւնաբերական հիմնարկութիւններում.

b) Ապահովագրութիւն առանձին անձերի ամեն տեսակ դժբաղդ դէպքերից, պրէմիաների վերադարձով եւ առանց վերադարձի, եւ

c) Մշտական ապահովագրութիւն ճանապարհորդների դժբաղդ պատահարներից երկաթուղիական եւ ջրային ճանապարհներում՝ պրէմիայի միանուագ վճարմամբ ապահովագրութեան սկզբում։

Գլխաւոր գործակալի բնակարանը գտնվում է ԹԻՖԼԻՍՈՒՄ, Սօլոլակայա եւ Սերգեւսկայա փողոցների անկիւնում, Միրզոեվի տուն № 1. 2—3

Սովորեցնում եւ պատրաստում եմ

երկու սեռի անձանց, չորս ամսվայ ընթացքում, լիակատար երաշխաւորութեամբ և, կարճագրերում, պարապմունքներ գտնելու համար յանձնարարութիւններ տալով

ՀԱՇՈՒԱՊԱՀՈՒԹԻՒՆ.

Կրկնակի իտալական հաշուապահութիւն իր բոլոր ճիւղերով։ Առեւտրական թուաբանութիւն։ Գեղագրութիւն. ուսումնասիրութիւն զանազան տեսակ շրիֆտների եւ ուղղումն ամենավատ ձեռքերի։

Կարելի է տեսնել առաւօտեան 9—10 ժ. եւ երեկոյեան 4—7։ Պարապմունքները սեպտեմբերի 20-ից.

Հասցէ. Սօլոլակ, Գանօվսկայա փողոց, տուն Թաժամշեանի, № 26, բնակարան 9։ Սերգէյ Վասիլ. Աբրահամեանցին։ (Ե. հ. չ.) 5—10

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET C-ie

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր եւ ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԷԼԻՑ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու շաբաթը մի անգամ։

Եւ հակառակը՝ Բաթումից Մարսէլ, մտնելով Տրապիզոն, Սամսոն եւ Պոլիս։ Մեկնում է Բաթումից՝ չորեքշաբթի, 13/25 սեպտեմբերի ԱՆԱՏՕԼԻ շոգենաւը, նաւապետ ԲԻԱՆԿԻ։ Եւ այսպէս շարունակաբար, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին աշից յետոյ։

Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են սովորականից պակաս գներով։

Ամիսը մի անգամ կանոնաւոր հաղորդակցութիւն Բաթումի եւ Անտվերպէնի մէջ, ընդունելով ապրանքներ բոլոր հիւսիսային նաւահանգիստների համար։

Ապրանքների եւ ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ ստանալու համար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակատարներին՝

ԲԱԹՈՒՄՈՒՄ—պ. Վիկտոր դ'Արնօվն, Նաբէրէժնայա։ ԹԻՖԼԻՍՈՒՄ—պ. Ո. Գ. Բարեկենդանեանին, Սիոնի փող. Խօջափարուխովի եւ Մայսուրաձէի քարվանսարա։ ԲԱԳՈՒ—եղբ. Վ. եւ Ի. Մուրթաֆեաններին, Նաբէրէժնայա փողոց, տուն Կրասիլնիկովի, № 27։ ՆՈՎՈՐՕՍՍԻՑՍԿ—Վլադիկաւկազի երկաթուղու առեւտրական գործակալութիւն (Ե. հ. չ.) 8—20

ՎԻԷՆՆԱՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Վ. ԵՒ Ա. ԽՈՒԴԱՎԵՐԴԵԱՆՆԵՐԻ

Գօլով. պրոսպ., առաջին գիմնազիայի հանդէպ, տ. Քաչուէթի ս. Գէորգ եկեղեցու

Աշնան համար ստացված են ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ

Ֆօրմէննիյ զգեստներ Կլասիքական գիմնազիայի, բէալական և առեւտրական ուսումնարանների համար։

Ընդունում ենք ամեն տեսակ պատուէրներ

5—10

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

(Թիֆլիս, Լերմոնտովսկայա փողոց, № 9)

Ցանկացողները ունենալ իրանց առեւտրական գործերի համար ուսման ընթացքը աւարտած աշակերտներ եւ աշակերտուհիներ, թող բարեհաճեն դիմել կուրսերի հիմնողին, Ս. Մանուէլեանցին։ Աւարտողները ստացել են մասնագիտական առեւտրական կրթութիւն, Կովկասի ուսումնարանական շրջանի հոգաբարձուի հաստատված ծրագրի համեմատ, եւ ունեն օրինաւոր ատեստատներ։

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՍԿՍՎԵԼՈՒ ԵՆ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1-Ի

Կուրսերի ծրագիրը եւ կանոնները կարելի է ստանալ ձրիապէս եղբ. Ծովիանովների բանկային գրասենեակում եւ կուրսեր հիմնողի բնակարանում։ Օտարաքաղաքացիները դիմում են՝ ТИФЛИСЪ, учредителю коммерческихъ курсовъ С. П. Мануэльянцу. (Ե) 9—12

ԹԻՖԼԻՍԻ ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ

վաճառվում են պետական դպրոցների համար կազմած հայոց կրօնի դասագրքեր՝ Եղնիկ ա. ք. Երզնկեանի աշխատասիրութեամբ.

I. Առաջին գրքոյկ, պատրաստականների համար. ,,ԱՂՕԹՔՆԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒ ԳԼԽԱՒՈՐ ՏՕՆԵՐԻ ՀԱՄԱՌՕՏ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐԸ,,։ Գ. տպագր.

Գինը 20 կոպէկ։

II. Երկրորդ գրքոյկ, Առաջին դասարանի համար. ,,ՀԻՆ ՈՒԽՏԻ Ս. ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ,,։ (Նոր հրատարակութիւն)։ Գինը 30 կ.։ (Ե. հ. չ.) 5—10

Дозволено цензурою, Тифлисъ. 4 Сентября 1900 г.

Типографія Грузинск. Т—ва, Большая-Ванкская ул., № 27.